Հաստատում եմ՝

Տնօրեն՝ _____Գ. Գրիգորյան_____ <<_____01_____>>_____09_____20___թ.

Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզ

Հրազդանի Պ. Սևակի անվան N8 հիմնական դպրոց

IX դասարանի դասղեկ

Մարգարյան Աննա Ալեքսանի

<<_2023-2024_>> ուստարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում սովորում են 28աշակերտ՝ 17 տղա, 11 աղջիկ: Դասարանի բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանում կան և՛ գերազանց, և՛ հարվածային, և՛ բավարար գնահատականներով սովորող աշակերտներ: Դասարանում կա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երկու աշակերտ, ովքեր ընդունված և հարդված են դասընկերների կողմից:Նրանց նկատմամբ բոլոր աշակերտները ցուցաբերում են հոգատար վերաբերմունք:Այս տարի դասարանում ունենք նորեկ՝Չիլինգարյան Ռիման,,որն անմիջապես ընդունվեց և սիրվեց դասընկերների կողմից : Աշակերտները հաճախում են տարբեր խմբակներ: Դասարանում կան նաև դժվար դաստիարակվող աշակերտներ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Դաստիարակությունը կրթության կարևոր բաղադրիչներից է:Ժամանակակից դաստիարակության հիմնական խնդիրներն են՝ անհատի մոտ պատասխանատվության և հանդուրժողականության ձևավորումը , հոգևոր և մշակութային արժեքների գնահատումը, նախաձեռնության և ինքնուրույնության զարգացումը:Այդ գործընթացը արդյունավետ կատարելու համար անհրաժեշտ է ամբողջ ընթացքում կարևոր համարել սովորողների առողջության և կենսունակության պահպանումը, ուսումնական և արտադասարանային գործունեության պահպանումը, ինչպես նաև սերտ համագործակցությունը աշակերտների ծնողների և սոցիալական մանկավարժների հետ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1. Հոգևոր դաստիարակություն

Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ՝ աշակերտներին հնարավորություն տալով ծանոթանալու իրենց հոգևոր և կրոնական ժառանգությանը, զգալու և գնահատելու իրենց հոգևոր արժեքները: Կազմակերպել նաև զրույց- քննարկումներ քրիստոնեական ծեսերի և տոների թեմաներով:Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:

3.2. Գեղագիտական դաստիարակություն

Մտածող և զարգացող մարդ դաստիարակելու համար, անհրաժեշտ է առաջին հերթին նրան դաստիարակել գեղագիտորեն:Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մարդու ընդհանուր զարգացվածության զգալի մասը: Որքան խորն է գեղագիտական ընկալումը, այնքան ամուր է մարդ-արվեստ, մարդ-բնություն կապը:

3.3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Հայրենասիրությունը հանդիսանում է անհատի, ազգի, ժողովրդի, հասարակության , պետության գոյատևման անբաժանելի բաղադրիչը:Անհերքելի է, որ հայրենասիրական դաստիարակությունը և ազգային դաստիարակությունը անբաժանելի են, և որ վերջինս իր մեջ ներառում է յուրաքանչյուր ազգի կողմից դարերի ընթացքում կուտակված հոգևոր և մշակութային արժեքները: ՈՒսուցման ընթացքում կազմակերպելով թեմատիկ զրույցներ ազգային և հայրենասիրական թեմաներով՝մենք կնպաստենք համակողմանի զարգացած, կիրթ և հայրենասեր սերնդի դաստիարակությանը:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն

ՈՒսումնական պրոցեսի ընթացքում մեծ ուշադրություն է դարձվում աշակերտի ֆիզիկական և մտավոր առողջության պահպանման վրա: Այս ուղղությամբ աշխատելիս անհրաժեշտ է համագործակցել դպրոցի բուժքոջ և ծնողների հետ՝դասարանի աշակերտների ֆիզիկական և առողջական վիճակին ծանոթանալու նպատակով: Պետք է սովորեցնել՝ ինչ է առողջ ապրելակերպը, ինչու է կարևոր պահպանել հիգիենայի կանոնները:Խրախուսել սպորտով զբաղվող աշակերտներին և հնարավորինս մեծացնել աշակերտների ներգրավվածությունը տարբեր սպորտային խմբակներում:

3.5. Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքը համարվում է բարեկեցության հիմնական աղբյուրը և պետք է աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա արժեվորել աշխատանքը և գոյատևել այժմյան դժվար պայմաններում:

3.6. Բնապահպանական դաստիարակություն

Դպրոցի կարևոր խնդիրներից մեկը բնապահպանական գիտակցության նավորումն է, որը միաժամանակ ձևավորում է բարոյական մշակույթ: Բնապահպանական կրթության և դաստիարակության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ: Ճիշտ օգտագործելով ուսուցման և դաստիարակության տարբեր մեթոդներ՝մենք կդաստիարակենք բնասեր և ազնվաբարո մարդ:

Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում :

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Երեխայի դաստիարակության գործընթացն իրականացվում է դպրոց – ընտանիք սերտ համագործակցության շնորհիվ:Այդ կապի խաթարման դեպքում հնարավոր են անհաջողություններ և տհաճ հետևանքներ: Կարևոր է ծանոթանալ աշակերտների ընտանիքների հետ, տեղեկացված լինել ընտանիքում առկա խնդիրներին, պարբերաբար աշխատել ծնողների հետ՝ կազմակերպել սեմինարներ, հոգեբանամանկավարժական զրույցներ: Չնավորված փախադարձ վստահության շնորհիվ ապահովել երեխաների դաստիարակության գործընթացը:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ և ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐ

	Նախասիրական, առարկայական խմբակներ	Գեղարվեստական-երաժշտական խմբակներ	Մարզական խմբակներ	Այլ խմբակներ
1				
2				
3				
4				
5			Վորկոուտ	
6		Նկարչություն,		
7				
8			դյուդո	
9				
10		պար		
11				
12				
13			Վորկոուտ	
14				
15				
16				
17	անգլերեն		Ֆուտբոլ	
18				
19				
20				
21				
22			դահուկ	
23				
24				
25		ասմունք		
26				
27			Դահուկ,	
28		պար		

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը	Անցկացվող միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
01.09.2023	*1.Նոր ուսումնական տարվա մեկնարկ:*	*Կատարվել է*
08.09.2023	*2.Աշակերտական խորհուրդ և հանրօգուտ աշխատանք:*	*Կատարվել է*
15.09.2023	*3.Ի՞նչ է հայրենասիրությունը:*	*Կատարվել է*
	4.Ուսուցիչ,որին ես շնորհակալ եմ այն բանի համար,որ նա…	
	5.Ո՞վ է իսկական քաղաքացին:	
	6.Հայաստան,ուզում եմ քեզ հայտնել իմ սերը:	
	7.Մարդ,որին կուզեի նմանվել	
	8.Ահաբեկչությունը որպես մարդկության իսկական չարիք:	
	9.Ծնողներս ինձ համար,ես՝ ծնողներիս:	
	10.Զրույց՝ <<Մարդիկ, առանց որոնց ես միայնակ եմ>>:	
	11.Մեդիագրագիտության կարևորությունը արդի ժամանակներում:	
	12.Բանավեճ՝ <<Ընկերության և ընկերասիրության մասին>>:	
	13.Ամանորյա մտորումներ:	

	14.Առաջին կիսամյակի ամփոփիչ քննարկումներ:	
	15.Իմ օրագրի ուրախ և տխուր էջերը:	
	16.Հայոց բանակի հզոր ուժը և այսորվա աշակերտը:	
	17.Դպրոցական օրերի ուրախություններն ու դժվարությունները:	
	18.Լսելու կարողություն:	
	19.Ազատություն և ազատասիրություն	
	20.Իմ երազանքներն ու նպատակները:	
	21.Ինչպե՞ս հաղթահարել ծուլությունը:	
	22.Երբ քեզ շրջապատում են սիրելի մարդիկ:	
	23.Բանավեճ՝ <<Ուզում եմ և կարող եմ>>:	
	24.Դասարանական ժամ՝ <<Երկիր,որտեղ կուզեի ապրել>>:	
	25.Շարադրություն՝<<Աշխարհն իմ պատուհանից>>:	
	26.Ուժի, փառքի և անմահության մասին:	
	27.Լրագրերի դերը մարդու կյանքում:	
	28.Հայկական թերթերի պատմությունից:	
	29.Իմ կարդացած ամենահետաքրքիր գիրքը:	
	30.Պատասխանատվություն և անպատասխանատվություն:	

	31.Բանավեճ՝ <<Գեղեցիկն ու տգեղը մեր կյանում>>:	
	32.Ինչպես եմ շարունակելու ուսումս:	
	33.Ինչպես եմ պատկերացնում ինձ դպրոցն ավարտելուց հետո:	
	34.Ուսումնական տարվա արված և չարված գործերի ամփոփում:	

ԴԱՍԱՐԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը	Օրակարգի հարցերը	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
06.09.2023	1.Ծնողկոմիտեի ընտրություն 2.Աշակերտների անձնական տվյալների ծանուցում 3.Սոց.վիճակի և հասցեների ճշտում 4. Ընթացիկ հարցեր	Ներկայացվեց նոր ուստարվա խնդիներն ու դրանց լուծմանն ուղղված քայլերն ու ծրագրերը:Ճշտվեցին հասցեներ, աշխատանքի վայրերը և ընտանիքի սոցիալկան վիճակը: Ներկայացվեց աշակերտների «Անձնական տվյալների ծանուցում» փաստաթուղթը, որի հետ ծանոթանալուց հետո ծնողները ստորագրեցին	

ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

ՆԱԽԱԳԱՀ՝ __*Հայկանուշ Սոնայան*_____

Անդամներ՝

1. *Արևիկ Ալեքսանյան*
2. *Արփինե Սահակյան*
3. *Քրիստինե Նազարյան*
4. *Հայկանուշ Հովհաննիսյան*